*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

ՊԱՇԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՐԱՆՆ Է

# ՀԱԿՕԴԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Թարգմ. Գ. ԱԹԱՅԱՆ

623.459
Հ-14

ՀՍԽՀ ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ ԿԵՆՏԽՈՐՀՈՒՐԴ

ՅԵՐԵՎԱՆ 1935

13 340

29.05.2013

Սրբագրիչ՝ Գոր. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 684
Պատ. № 2, տիրաժ 3000

Պոլիգրաֆի տպարան, Երևան, Նալբանդյան № 50

623,459 Ա-8

Ճ-17

04 AUG 2010

«Պարոնայք իմպերալիստներն ամեն ինչ անում են նրա համար, որ ամեն օր, մանավանդ վերջին ժամանակներս, մեզ հիշեցնեն՝ արտաքին հարձակումից ՍՍՀՄ-ը պաշտպանելու գործում մեր խնդիրների մասին։

(Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ.)

# ԱՇԽԱՏԱՎՈՐ

## ՏԻՐԱՊԵՏԻՐ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

### ՀԱՆՁՆԻՐ ԱՅՍ ՆՈՐՄԱՆԵՐԸ

100Ձ
33093
955

### 1. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*1. Իմանալ թե ինչի համար է հարկավոր ընակչության հակոդային և հակաքիմիական պաշտպանությունը և Պաչավիաքիմի խնդիրներն այդ բնագավառում։*

*2. Հասկացողություն ունենալ օդային հարձակման միջոցների մասին և դրանց*

ներգործության բնույթի մասին. ա) ֆուգասային և բեկորային ռումբեր, բ) հրձիգ ռումբեր, գ) քիմիական ռումբեր և ԹՆ (թունավորող նյութեր) փոշիացումն ինքնաթիռներից։

3. Կարողանալ որոշել արտաքին հատկանիշներով ու հոտով՝ իպրիտը, լյուիզիտը, ֆոսգենը, քլորպիկրինը և ադամսիտը։

4. Իմանալ, թե ինչ պիտի անել օդային տագնապի և քիմիական վտանգի ազդանշաններով հասարակության օգտվելու տեղերում, արտադրության մեջ, փողոցում և տանը։ Տարբերել կարողանալ ողային տագնապի և քիմիական վտանգի ազդանշանները և կայուն ԹՆ-ով վարակված վայրը շրջապատելու նշանները։

5. Իմանալ, թե ուր և ինչպես պիտի հայտնել հրդեհների և ճառավածների մասին

## II. ՀԱԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

6. Իմանալ, թե ինչի համար է ծառայում հակագազը, ինչ նշանակում ունեն նրա



հիմնական մասերը, որքան ժամանակ և ինչ ԹՆ-ից է պաշտպանում հակագազը, իմանալ իր հակագազի չափը։ Ցանկալի է, որ ՀՕՔՊ նորմաներից յուրաքանչյուր քննություն տվող ունենա իր հակագազը։

7. Կարողանալ. ա) կանոնավոր հագնել հակագազը 5 վայրկյանի ընթացքում, բ) մնալ հակագազը հագած հանգիստ վիճակում 1 ժամ, կամ շարժման (աշխատանքի) ժամանակ 30 րոպե, գ) հայտաբերել հակգազի անսարքությունը և օգտվել անսարք հակագազով՝ ներշնչման կափույրի (կլապանի) և ծալքավոր խողովակի արտաշնչման կափույրի ու կորգակի փչանալու դեպքում, դ) հակագազը հանել, չորացնել, կանոնավոր ծալել և պայուսակի մեջ դնել, ե) ծխացման խուցի (կամերի) մեջ մնալ 5 րոպե, որից առնվազն 5 վարկյան հակագազը հանած։

8. Իմանալ, թե ինչպես տանը գազապաստան սարքավորել և դրանով ինչպես օգտվել։

9. Կարողանալ դուրս գալ ԿԹՆ (կայուն թունավորող նյութերով) վարակված վայ-

րից, օգտվելով ձեռքի տակ յեղած նյութերով։

10. Իմանալ, թե ինչպես պաշտպանել ԹՆ-ից սննդամթերքները և տնային իրերը և ինչպես վարվել ԹՆ-ով վարակված առարկաների ու մթերքների հետ։

11. Իմանալ ԿԹՆ գազահանման հիմնական միջոցներն ու յեղանակները։

## III. ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

12. Իմանալ վնասվելու հատկանիշները և կարողանալ փոխադարձ օգնություն ցույց տալ վնասվածների ժամանակ. ա) հեղձուցիչ ԹՆ-ով՝ քլորով, ֆոսգենով, բ) հանրաթունավոր ԹՆ կապտաթթվով, շմոլագազով, գ) գրգռիչ ԹՆ—ադամսիտով, քլորացետոֆենոնով, դ) պալարակա-ներգործության ԹՆ-իպրիտով, լյուիզիտով։

13. Կարողանալ. ա) օգտվել անհատական սանիտարական և հակաիպրիտային ծրարներով, բ) հեռացնել իպրիտի կաթիլները մաշկից և աչքերը լվանալ, գ) արհեստական շնչառություն կատարել Սիլվեստրի և



Շեֆֆերի համաձայն, դ) արյունահոսությունը կանգնեցնել և հասարակ վիրակապ դնել 2—3 րոպեյում, ե) տեղափոխել վնասվածին՝ վիրավորին, գազով թունավորվածին, առանց պատգարակի, յերկու մարդով։

Ծանոթություն.— ՊՍՊ (պատրաստ սանիտարական պաշտպանության) նորմաներից քննություն տված անձնավորությունները բժշկա-սանիտարական պաշտպանության նորմաներից քննություն չեն տալիս։

## IV. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

14. Իմանալ, թե ինչ միջոցառումներ պետք է անցկացնել՝ տներում և արտադրության մեջ հրդեհներ առաջանալու վտանգը պակասեցնելու համար։

15. Իմանալ, թե ինչպես կռվել հրձիգ ռումբերից հրդեհներ առաջանալու դեմ։

16. Կարողանալ օգտվել հրշեջով, ավազով և ձեռքի տակ յեղած այլ միջոցներով հրդեհը հանգցնելու ժամանակ։

## V. ՏԱՆԸ ՀՈՔՊ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

17. Իմանալ ՀՈՔՊ (հակօդային և քիմիական պաշտպանության) լիազորի նշանակումը։

18. Իմանալ ինքնապաշտպանության խմբակի դերն ու խնդիրները։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՈՔՊ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միության աշխատավորության մեջ հակօդային և քիմիական անգրագիտության վերացումն անց է կայվում «Պատրաստ ՀՈՔՊ (հակօդային և քիմիական պաշտպանության) նորմաներից քննություն տալու միջոցով։

2. ՀՈՔՊ նորմաներից քննություն տալու թույլատրվում է արական և իգական սեռի այն անձնավորություններին, որոնք զրկված չեն ընտրական իրավունքներից և 18 տարե-



կան ու ավելի բարձր հասակ ունեն։ Այդ նորմաներից քննություն տալը տեղի յն ունենում, թե ՀՈՔՊ խմբակների մեջ կազմակերպված և թե անհատական կարգով պատրաստված աշխատավորների կողմից։

3. Քննությունները կատարվում են քաղաքային, շրջանային և յենթաշրջանային խորհուրդների կողմից. Պաշտպանաքիմի «А» «Б» և «В» ՌՔՎԿ (Ռազմա-քիմիական վարժակայան) կողմից, նույնպես և հակօդային ու քիմիական պաշտպանության աշխատանքներ անցկացնող գերատեսչությունների ու կազմակերպությունների կողմից։

ՊԺԿ (Պաշտպանության ժողովրդական Կոմիսարիատի) ձեռնարկությունների, ՀՈՊի շտաբի, Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի կազմակերպությունների, առողջապահության, բնակմիության, հրշեջ պահպանության և միլիցիայի օրգանների կողմից և այլն։

4. Քննություններն անցկացնելու համար նշանակվում են պատասխանատու անձնավորություններ, որոնք գլխավորում են

ավյալ կազմակերպության կամ ձեռնարկության հակօդային ու քիմիական պաշտպանության աշխատանքները՝ հրահանգիչներ, տեսուչներ, համապատասխան կազմակերպության պետեր և այլն։

5. ՀՕՔՊ նորմաներից քննություն տալու կայանները պետք է տեղավորված լինեն բնակչության հիմնական մասսաների աշխատանքի կամ բնակության վայրերում, այսինքն՝ ձեռնարկություններում, բնակվարձկոոպներում, հիմնարկություններում և այլն։ Նորմաներից քննություն տալու կայաններում պետք է լինեն քննություն կատարելու համար անհրաժեշտ բոլոր իրերն ու սարքերը՝ հակագազեր, անհատական ծրարներ, ախտահանման լուծույթներ, հրշեջներ, ավազ և այլն։

6․ Հաշվառումն ու հաշվետվությունը կատարվում է հատուկ քարտում ու մատյանում, ըստ որում քարտը պետք է լինի նորմաներից քննություն տվողներից յուրաքանչյուրի ձեռքին։ Մատյանի մեջ գրանցվում են բոլոր նորմաներից արդեն քննություն տված անձնավորությունները։



7. Նորմաներից քննություն կատարող անձնավորությունները պատասխանատվություն են կրում Պաշավիաքիմի քաղաքային, շրջանային և յենթաշրջանային խորհրդի առաջ՝ քննությունների կազմակերպման, քննություն տալու մասին նշանակումներ կատարելու և քննությունների հաշվետվության համար։

8. Աշխատավորների նախապատրաստությունը քննություն տալու համար կարող է ընթանալ հետևյալ ուղիներով.

ա) մասսայական աշխատանքի կարգով, գրույցներ, լեկցիաներ, հատուկ մասսովկաներ, ցուցահանդեսներ և այլն կազմակերպելու միջոցով, թե արտադրության մեջ և թե հանգստյան տներում, Կարմիր բանակի տներում, կուլտուրայի և հանգստի պարկերում և բնակության վայրերում.

բ) անհատորեն՝ համապատասխան գրականության մշակման միջոցով։

գ) ՀՕՔՊ անգրագիտության վերացման

խմբակներ կազմակերպելու միջոցով։

9. Քննություններից առաջ, աչքի ընկնող տեղերում, լայնորեն հրապարակվում, փակցվում են հարցացուցակներ՝ քննությունների ծրագրի համեմատ, մատնանշելով մասսայական գրականությունը։

10. ՀՕՔՊ սահմանված նորմաներից քննություն տվածները համապատասխան վկայական են ստանում։

11. Նորմաներից լիովին քննություն տված անձնավորությունները օգտվում են հետևյալ իրավունքներով.

ա) ՀՕՔՊ խմբերի և ինքնապաշտպանության խմբակների մեջ նշանակվելու.

բ) առավելություն ստանալու՝ հակօդային և քիմիական պաշտպանության մասնագիտական դպրոցական հիմնարկները մտնելու ժամանակ։

12. Քննություն տված անձնավորությունները պարտավոր են.

ա) մարզվել հակագազը հագած մնալու արտադրության մեջ և սովորական կյանքում.



բ) սիստեմատիկաբար բարձրացնել իրենց գիտելիքները ու գործնական ունակությունները՝ մասնագիտական լեկցիաներ, պարապմունքներ հաճախելու և ինքնապատրաստության միջոցով։

ԽՍՀՄ ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ
ԿԵՆՏԽՈՐՀՐԴԻ ՀՕՔՊ ԲԱԺԻՆ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0278847

13.340
38